

«Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագիրն ուղղված է կիրառական գիտելիքների և հետազոտական աշխատանքների կարողությունների ձևավորմանը ֆինանսական ոլորտում: «Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության մասնագետը զինված է լինելու մրցունակ մասնագիտական և ընդհանրական գիտելիքով, հմտություններով և կարողություններով, օտար լեզուների և ժամանակակից ծրագրային փաթեթների իմացությամբ: ՀՊՏՀ «Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության շրջանավարտը ունակ է լինելու արդյունավետ հետազոտելու ֆինանսական և այլ տնտեսագիտական ոլորտներում:

«Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությունն արդիական է քանզի հնարավորություն է տալիս հստակ ձևակերպելու տնտեսագիտական հիմնախնդիրները, մասնավորապես այն հիմնախնդիրները, որոնց վերլուծությունը արդյունավետ է «Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության մեթոդների միջոցով: Արդիական է, որ խնդիրներ ձևակերպելու հետ միասին, շրջանավարտը, «Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության մասնագիտական գիտելիքները կիրառելով, ցուցաբերի տնտեսագիտական խնդիրները համակարգված ձևով հետազոտելու ունակություն: Դրա համար անհրաժեշտ է, որ նա նաև քաջատեղյակ լինի մաթեմատիկական տնտեսագիտության մեթոդների ամբողջ դաշտին: «Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության շրջանավարտը կարող է վեր հանել ֆինանսական, արտադրական խնդիրները և առաջարկել դրանց լուծումները՝ կիրառելով ժամանակակից տնտեսության վերլուծության մեթոդները, այդ թվում «Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության մեթոդները:

Մասնագիտության նկարագիր

«Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» բակալավրիատի ծրագրի նպատակն է բարձր որակավորման մասնագետների պատրաստումը՝ համապատասխան գիտելիքով, կարողություններով և հմտություններով օժտված, որոնք կարող են ֆինանսական մաթեմատիկայի մասնագետի, տնտեսության, մասնավորապես, ֆինանսական ոլորտի, տնտեսամաթեմատիկական վերլուծաբանի, ֆինանսական իրավիճակի գնահատողի, տնտեսական զարգացման կանխատեսումներ իրականացնողի պաշտոններ զբաղեցնել կառավարությունում, Կենտրոնական բանկում, բանկային ոլորտում, ապահովագրական ընկերություններում, բորսաներում, միջազգային կազմակերպություններում, գիտահետազոտական հիմնարկներում, արտադրական կազմակերպություններում: Ծրագիրը միջոցառումներ է և ներառում է

Ֆինանսամաթեմատիկական հետազոտություններ, ֆինանսական ցուցանիշների փոխկապվածությունների վերլուծություն, բանկային ոլորտի և ապահովագրական ընկերությունների գործունեության գնահատում, օպտիմալ պորտֆելի ձևավորման և կառավարման սկզբունքներ, ֆինանսական գործիքների կիրառման մեթոդաբանություն, մաթեմատիկական տնտեսագիտության, գործառնությունների հետազոտության և օպտիմալ որոշումների կայացման մեթոդները, էկոնոմետրիկական մեթոդներ, նմանակության մոդելավորում, վիճակագրական հետազոտություններ, ինչպես նաև կանխատեսումների իրականացման տարբեր մեթոդներ:

«Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրի խնդիրներն են այնպիսի գիտելիքներով, կարողություններով և հմտություններով օժտված շրջանավարտների պատրաստումը, որոնցից էլնելով՝ կրթական ծրագրի շրջանավարտը կարողանա.

1. Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի գործիքակազմի միջոցով գնահատել ֆինանսատնտեսական գործընթացները
2. Վերլուծել ֆինանսական ցուցանիշների փոխկապվածությունները
3. Իրականացնել ֆինանսական գործիքների գնահատումը՝ գործառնությունների հետազոտության և օպտիմալ որոշումների մեթոդների միջոցով
4. Հետազոտել և կանխատեսել ֆինանսատնտեսական շուկաների վարքագիծը
5. Գնահատել բանկային ոլորտի և ապահովագրական ընկերությունների գործունեությունը
6. Իրականացնել ռիսկերի գնահատում և տնտեսության կառուցվածքի վերլուծություն ակտուարական մաթեմատիկայի մեթոդների միջոցով

Աշխատանքի հնարավորությունները

Ֆինանսական մաթեմատիկայի բակալավրի որակավորումը բարձրագույն կրթության «Ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրի շրջանավարտներին հնարավորություն է ընձեռում աշխատելու հետևյալ բնագավառներում՝

- կառավարման ոլորտում,
- ֆինանսաբանկային, այդ թվում նաև, ապահովագրական ոլորտում,
- հետազոտությունների իրականացման ոլորտում,
- խորհրդատվությունների ոլորտում:

Կառավարման ոլորտում «Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության մասնագետները մասնակցում են օպտիմալ որոշումների կայացմանը, ընկերության ֆինանսատնտեսական քաղաքականության տնտեսամաթեմատիկական վերլուծության հիման վրա մշակում են ընկերության ֆինանսատնտեսական գործունեության բարելավման հիմնավորված մոտեցումներ և գնահատում դրանք կառավարման արդյունավետության բարելավման տեսանկյունից: Կարող են արդյունավետ կերպով համակարգել տվյալ ոլորտի աշխատանքները, իրականացնելով տնտեսամաթեմատիկական վերլուծություն՝ մշակել աշխատանքների կազմակերպման համապատասխան մեթոդաբանություն:

Ֆինանսաբանկային, այդ թվում նաև՝ ապահովագրական ոլորտում ֆինանսական մաթեմատիկայի մասնագետները, ելնելով ֆինանսատնտեսական հիմնախնդրից, արդյունավետ կերպով ընտրում են ֆինանսական մաթեմատիկայի գործիքակազմի միջոցով հիմնախնդրի գնահատման և վերլուծության կոնկրետ եղանակներ, կիրառում են ֆինանսական մաթեմատիկայի մեթոդները, մեկնաբանում ստացված արդյունքները, մշակում են ներդրոտային և միջոլորտային ռիսկերի գնահատման մոտեցումներ, մեթոդաբանական առաջարկություններ և արդյունավետորեն կիրառում դրանք, մշակում են զարգացման սցենարներ և ռազմավարություններ և գնահատում դրանց ներդրման նպատակահարմարությունը, արդյունավետությունը:

Հետազոտությունների իրականացման ոլորտներում ֆինանսական մաթեմատիկայի մասնագետները, ելնելով ուսումնասիրվող օբյեկտից կամ կոնկրետ իրավիճակից, կարող են ինքնուրույնաբար ընտրել համապատասխան տնտեսամաթեմատիկական մեթոդները և կիրառել դրանք: Ունակ են պատշաճ ձևով իրականացնել հետազոտություն ֆինանսական մաթեմատիկայի, ինչպես նաև, ամբողջ մաթեմատիկական տնտեսագիտության մեթոդների և գործիքակազմի միջոցով և ճիշտ մեկնաբանել ստացված արդյունքները: Մասնակցում են այդ մեթոդների միջոցով ստացված արդյունքների ներդրմանը և գնահատում են դրանց արդյունավետությունը: Մասնակցում են գիտաժողովներին, սեմինարներին՝ արված հետազոտությունների արդյունքների ներկայացմամբ, ինչպես նաև հրապարակում են հետազոտությունների աղյուսները գիտական պարբերականներում, ժողովածուներում:

Խորհրդատվությունների ոլորտներում, ելնելով ֆինանսատնտեսական օբյեկտի յուրահատկություններից, ընտրում են մաթեմատիկական տնտեսագիտության, մասնավորապես, ֆինանսական մաթեմատիկայի համապատասխան մեթոդներ՝ խորհրդատվական առաջարկությունների հիմքում զարգացման, իմիտացիոն կամ վերլուծական սցենարների և կանխատեսումների մշակման համար: Կարող են գնահատել ներդրոտային և միջոլորտային ռիսկերը, որոնք հատուկ են ուսումնասիրվող օբյեկտին, կարող են գնահատել օպտիմալ պորտֆելը, առաջարկել ֆինանսական գործիքների կիրառման սկզբունքներ, գնահատել ներդրումների արդյունավետությունը, կիրառել եկամտաբերության նորմի գնահատման սկզբունքները, բարդ տոկոսի մաթեմատիկայի սկզբունքները և տրամադրել այդ և նման այլ խնդիրների լուծման խորհրդատվական ծառայություններ: